

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՁԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<21 >> մարտի 2014թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 7 -ի N 28 Ա որոշումը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ Ի.Ասատրյանի, ՀԳՄՀ բաժնի վարիչ՝ Հ. Օհանյանի, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ՝ Խ.Բուդումյանի, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ՝ Վ.Մնացականյանի, մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ՝ Մ. Ղուրշուդյանի և ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ՝ Գոռ Ղազարյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների և հողօգտագործման բնագավառներում ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Նորատուս համայնքի ղեկավարին:

ԻՎԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ



ՎԱՐԴՈՒՀԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



ՀՐԱՆԴԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՄԱՐԱՏ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ



ԳՈՌ ՂԱԶԱՐՅԱՆ



ԽԱԶԱՏՈՒՐ ԲՈՒԴՈՒՄՅԱՆ



Համայնքի ղեկավար՝



Մ. Հարությունյան